Ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ երեխայի ծննդյան միանվագ նպաստի դիմելու համար

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, և նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է ՀՀ ՔԿԱԳ մարմինը:
Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է նոր ծնված երեխայի ծննդյան ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում:

Ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերն են՝

ա. առաջին կամ երկրորդ երեխա - 50 000 դրամ,

բ. երրորդ կամ չորրորդ երեխա՝ 1 մլն դրամ, որից հինգ հարյուր հազար դրամը վճարվում է երեխայի անունով բացված պետական աջակցության հաշվին մուտքագրելու միջոցով,

գ. հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 1 500 000 դրամ, որից 1 միլիոն դրամը վճարվում է երեխայի անունով բացված պետական աջակցության հաշվին մուտքագրելու միջոցով:

ՀՀ ընտանիքում ծնված առաջին կամ երկրորդ երեխայի համար սահմանված չափով երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու դիմումը կարող է ներկայացվել առցանց՝ հետևյալ կայքէջում՝ www.epension.am և համապատասխանաբար մուտքագրում է հետևյալ տվյալները՝

1) ծնողի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,

2) նոր ծնված երեխայի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդյան վկայականի սերիան և համարը, ծննդյան վկայականը հատկացնելու օրը, ամիսը, տարեթիվը,

3) նպաստի՝ ուղղակի վճարվող գումարը վճարելու համար ծնողի բանկային հաշվի համարը կամ այն բանկի անվանումը, որտեղից ծնողը ցանկանում է ստանալ գումարը:

Առցանց դիմումին կից փաստաթղթեր (էլեկտրոնային լուսապատճեններ) չեն ներկայացվում:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու համար ծնողը անձամբ կամ այլ անձի միջոցով կարող է դիմել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության ցանկացած տարածքային բաժին, ներկայացնելով՝

1) դիմում,

2) ծնողի անձը հաստատող փաստաթղթերը, ծնողի՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը, եթե ծնողը հրաժարվել է հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ծնողի՝ նպաստի իրավունքը հաստատող այլ փաստաթղթեր,

3) նոր ծնված երեխայի ծննդյան վկայականը, հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը, եթե ծնողը հրաժարվել է երեխայի հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց,

4) այլ անձի միջոցով դիմելու դեպքում՝ դիմողի անձը հաստատող փաստաթղթերը, ծնողի՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը:

Եթե ծնողը օտարերկրյա քաղաքացի է, ինչպես նաև, եթե ներկայացվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստը երրորդ և հաջորդ երեխայի համար սահմանված չափով վճարելու դիմում, և նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը, ապա պետք է ներկայացնել նաև փաստաթուղթ՝ օտարերկրյա պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ նշանակված (վճարված) չլինելու վերաբերյալ:

Եթե դիմումը ներկայացվել է ընտանիքում երրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստ նշանակելու համար վերը նշված փաստաթղթերին կից ներկայացվում են նաև.

1) նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի առնված մյուս երեխաների (զավակների) անձը հաստատող փաստաթղթերը կամ դրանց պատճենները, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը, իսկ նոր ծնված երեխայի ծննդյան օրվանից հետո՝ մինչև նպաստի համար դիմելը, մահացած երեխաների (զավակների) դեպքում՝ մահվան վկայականը.

2) երեխայի (զավակի) սերման փաստը հաստատող փաստաթղթեր (երեխայի կամ զավակի ծննդյան վկայական կամ երեխայի (զավակի) սերման փաստի մասին ծննդի պետական գրանցման (ծննդյան ակտի գրանցման) փաստը հաստատող տեղեկանքում ներառված տեղեկատվություն պարունակող այլ փաստաթուղթ կամ դատարանի վճիռ, որով հաստատվել է երեխայի (զավակի) սերման փաստը):